ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

2023թ. ՕԳՈՍՏՈՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 2023թ. օգոստոս ամսին շարունակվում է համաշխարհային տնտեսական աճի դանդաղումը՝ պայմանավորված մշակող արդյունաբերության նվազող տեմպերով և ծառայությունների ոլորտի աճի դանդաղմամբ:
- Նավթի և մոլիբդենի գներն աճել են, իսկ պղնձի և պարենի գները՝ նվազել:
- 2023թ. օգոստոս ամսին արտահանման և ներմուծման աճի տեմպերը շարունակում են դանդաղել:
- Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ՀՀ դրամը ԱՄՆ դոլար և ռուսական ռուբլու նկատմամաբ շարունակել է արժևորման միտումը՝ համապատասխանաբար արձանագրելով 5.7 և 72.4 տոկոս: Եվրոի արժույթի նկատմամաբ արժեզրկման տեմպը կազմել է 2 տոկոս:
- ՀՀ այցելած զբոսաշրջիկների քանակը շարունակում է աճել, սակայն դրամական փոխանցումների զուտ ներհոսքը նվազում է:
- Տնտեսական ակտիվության աճի տեմպը օգոստոսին կազմել է 10.9%՝ հուլիսի համեմատ արագանալով 4.9 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների աճի արագացմամբ, ինչն էլ պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ծառայությունների աճի դանդաղման առկայությամբ:
- Օգոստոսին 12-ամսյա գնաճը մնացել է բացասական տիրույթում՝ կազմելով -0.2%, որի պայմաններում ԿԲ-ն օգոստոսին նվազեցրել է տոկոսադրույքը 0.25, իսկ սեպտեմբերին՝ 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 9.75%:
- Ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական զարգացումների համեմատ՝ հիմնականում դրսևորվելով վարկերի համեմատ ավանդների առաջանցիկ աճով և վարկերի կենտրոնացվածությամբ հիպոթեքային և սպառողական վարկավորման ուղղությամբ:
- Հարկային եկամուտները շարունակում են աճել բարձր տեմպերով (15.5%-ով), սակայն աճի տեմպի դանդաղում այստեղ ևս նկատվում է վերջին ամիսներին:
- Պետական բյուջեի եկամուտների աճը առաջանցիկ են եղել ծախսերի նկատմամբ, որի պայմաններում բյուջեն եղել է հավելուրդային:
- Բյուջեի ծախսերը հունվար-օգոստոս ամիսներին աճել են 13.7%-ով, մինչդեռ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերի աճի տեմպն առաջանցիկ է եղել՝ կազմելով 29.2%:

1. Միջազգային զարգացումներ:

Համաշխարհային տնտեսական աճը օգոստոս ամսին դանդաղել է՝ հասնելով վերջին յոթ ամիսների նվազագույն մակարդակին: Շարունակում է մշակող արդյունաբերության նվազումը և ծառայությունների ոլորտի աճի դանդաղումը, իսկ Եվրագոտին շարունակում է մնալ հիմնական թույլ կետը: Գործընկեր երկրներից ԱՄՆ-ում գրանցվել է Composite PMI-ի նվազում, մինչդեռ ԵԳ-ում՝ անկում, որը կազմել է 46.7: ՌԴ-ում շարունակվում է աճ գրանցվել պայմանավորված արդյունաբերության կայուն աճով և ծառայությունների ոլորտի արտադրանքի արագացված աճով:

Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները.



Ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում 2022թ. մարտ ամսից արագացող գնաճը զսպելու նպատակով գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվում է իրականացվել զսպող քաղաքականություն: Ընդ որում, ԱՄՆ-ում և ԵԳ-ում գնաճը շարունակում է բարձր մնալ սահմանված թիրախներից, Չինաստանում գտնվում է թիրախային մակարդակից ներքև, իսկ ՌԴ-ում կազմել է 4.3%՝ բավական մոտ լինելով թիրախին և համապատասխանելով ՌԴ ԿԲ կանխատեսումներին: ՌԴ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2023թ. հուլիսին բարձրացվել է 1 տոկոսային կետով (նախորդ տարվա հունիսից հետո առաջին անգամ), իսկ օգոստոսին ավելի կտրուկ՝ 3.5%-ով, ինչի արդյունքում վերջինս հասել է 12%-ի: Չնայած այն հանգամանքին, որ Եվրագոտում և ԱՄՆ-ում գնաճը դանդաղում է, Եվրոպական կենտրոնական բանկը և ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը շարունակում են իրականացնել զսպող դրամավարկային քաղաքականություն՝ սեպտեմբեր ամսին բարձրացնելով քաղաքականության տոկոսադրույքը. Եվրոպական կենտրոնական բանկը բարձրացրել է տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետ՝ սահմանելով 4.5%, իսկ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը հուլիսի 0.25 տոկոսային կետ բարձրացումից հետո՝ սեպտեմբեր ամսին քաղաքականության տոկոսադրույքը պահպանել է նույն՝ 5.5% մակարդակում:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարակային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



Նավթի և մոլիբդենի գները օգոստոսին՝ հուլիս ամսվա համեմատ աճել են համապատասխանաբար 7.6%-ով և 12.8%-ով, իսկ պղնձի և պարենի գները նվազել են 1.5 և 2%-ով: Նավթի գներն աճում են՝ պայմանավորված առաջարկի կրճատմամբ և պահանջարկի աճով, մասնավորապես, ՕՊԵԿ-ի կողմից արդյունահանման կրճատմամբ՝ հիմնականում, Սաուդյան Արաբիայի կողմից նավթի արդյունահանումը օրական 9.3 մլն բարելով կրճատման հաշվին: Արդյունքում, օգոստոս ամսին նավթի միջազգային գինը կազմել է 86.2 դոլար մեկ բարելի դիմաց՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 12.6%-ով: Պղնձի գինը շարունակում է տատանվել 8400 ԱՄՆ դոլարի շրջակայքում, որը նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել է 4.6%-ով: Մոլիբդենի գինը կտրուկ աճել է օգոստոսին՝ նախորդ ամսվա համեմատ 12.8%, իսկ նախորդ իսկ նախորդ

տարվա օգոստոսի համեմատ՝ 53.8%՝ պայմանավորված Չինաստանի պահանջարկով: Պարենի գինը նախորդ տարվա համեմատ նվազել է 11.8%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նվազումը պայմանավորված է որոշ ապրանքների (միս, կաթնամթերք, հացահատիկ, բուսական յուղեր) միջազգային գների նվազմամբ:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ



2. Արտաքին հատվածի զարգացումներ:

2023թ. վերջին երեք ամսներին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի դանդաղում: 2023թ. օգոստոս ամսին արտահանումն աճել է 6.1%-ով (նախորդ ամսվա աճը՝ 18.3%)՝ կազմելով **601.2** մլն դոլար, որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ՌԴ արտահանումը, իսկ **ներմուծումն աճել է 12.4%-ով (նախորդ ամսվա աճը՝ 20.4%)՝ կազմելով 1002 մլն դոլար**:

Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միտումները, մլն դոլար



2023 թվականի օգոստոս ամսին շարունակվում է արձանագրվել ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճի տեմպի դանդաղում (25.4%): Աճին ամենամեծ նպաստումն են ունեցել ՌԴ զբոսաշրջիկները: Հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների աճը կազմել է 52.1%:

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը



2023 թվականի հունվար-օգոստոսին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շարունակել են նվազել (36.2%-ով)՝ հասնելով 645 մլն դոլարի, որը պայմանավորված է հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 39 տոկոս (449.7մլն դոլար) նվազմամբ (նպաստումը՝ 28.1 տոկոսային կետ):

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամի արժևորման միտումները շարունակվում են նաև սեպտեմբերին: ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամը շուրջ 5.7%-ով արժևորվել է համեմատած նախորդ տարվա նույն ամսվա հետ: Սակայն մարտ ասմից նկատվում է դրամի արժևորման տեմպի դանդաղում: Մինչդեռ եվրոյի նկատմամբ դրամն արժեզրկվել է 2%-ով: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամը արժևորվել է 72.4%-ով (նախորդ ամիս՝ 64.8%)՝ արձանագրելով դրամի արժևորման մինչ այժմ գրանցված պատմական ամենաբարձր ցուցանիշը:

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ:

Տնտեսական ակտիվության աճի տեմպը հուլիս ամսվա որոշակի դանդաղումից հետո օգոստոսին 4.9 տոկոսային կետով արագացել է (պայմանավորված ծառայությունների աճի տեմպի արագացմամբ)՝ կազմելով 10.9%: Արդյունքում հունվար-օգոստոսին գրանցվել է ՏԱՑ-ի 10.4% աճ՝ պահպանվելով հունվար-հուլիսի աճի մակարդակում: Ընդ որում՝ ՏԱՑ-ի աճի տեմպի պահպանումը տեղի է ունեցել անցյալ տարվա նույն ժամանակահատվածի բարձր աճի բազայի առկայության պայմաններում:

ՏԱՑ-ի աճը հունվար-հուլիսին պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների (ի հաշիվ տեղեկատվություն և կապի, տրանսպորտի, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման) աճով: Մյուս ճյուղերը (բացառությամբ՝ արդյունաբերության) նույնպես նպաստել են աճին: Ընդ որում՝ արդյունաբերության նվազումը պայմանավորված է եղել հիմնականում մետաղական հանքաքարի արդյունահանման նվազմամբ, իսկ մշակող արդյունաբերության աճը հակազդել է ընդհանուր արդյունաբերության նվազմանը (պայմանավորված հիմնականում՝ այլ ոչ մետաղական հանքային, ծխախոտային և ոսկերչական արտադրատեսակների արտադրության, ինչպես նաև պոլիգրաֆիական գործունեության աճով): Շինարարության աճը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պայմանավորված է եղել կազմակերպությունների և համայնքների միջոցներով իրականացված շինարարության աճով, և ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտում շինարարության աճով, իսկ առևտրի աճը՝ մեծածախ առևտրի աճով:

Գծապատկեր 3.2. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)



Գծապատկեր 3.3. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (դիսկրետ, %)



Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 17.4%-ով՝ կազմելով 262,957 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 9.4%-ով՝ կազմելով 197,258 դրամ, իսկ ոչ պետականում՝ 19.2%-ով՝ կազմելով 289,842 դրամ): Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել են մշակող արդյունաբերության, առևտրի, ՏՏ, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպում ոլորտների աշխատավարձերի աճը: Իրական աշխատավարձը՝ 3.1% գնաճի պայմաններում աճել է 13.9%-ով:

Հունվար-հուլիսին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նվազել է 16.2%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ շուրջ 5.8%-ով՝ կազմելով 712,540 մարդ՝ պայմանավորված հիմնականում մշակող արդյունաբերության, ՏՏ, կացության և հանրային սննդի կազմակերպման, ինչպես նաև շինարարության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Առաջին եռամսյակում գործազրկության մակարդակը կազմել է 13.7%՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի նկատմամբ նվազելով 1.1 տոկոսային կետով: Գործազուրկների թիվը նվազել է 3.6%-ով, զբաղվածների թիվն՝ աճել 5.5%-ով: Միաժամանակ, աշխատուժի առաջարկն աճել է 4.2%-ով:

Գծապատկեր 3.4. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (%, 1000 մարդ, կուտակային)



ՀՀ անշարժ գույքի շուկայում օգոստոս ամսին գները շարունակել են աճել, սակայն, դանդաղ տեմպերով: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը հուլիսի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -0.5-ից 1.1% շրջանակներում, իսկ նախորդ տարվա օգոստոս ամսվա նկատմամբ՝ 3.8-ից 12.8% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1 ք.մ. մակերեսի հաշվարկով՝ 745,100 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1 քառ. մ մակերեսի հաշվարկով՝ 206,200 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը հուլիսի համեմատ տատանվել է -2.9-ից 2.9% շրջանակներում, իսկ նախորդ տարվա օգոստոս ամսվա նկատմամբ՝ 1.2-28.8%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ^2 մակերեսի հաշվարկով՝ 382,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռվա մարզի Թումանյան քաղաքում (1 ք.մ. մակերեսի հաշվարկով՝ 24,000 դրամ):

4. Դրամավարկային քաղաքականություն:

Օգոստոս ամսին գնաճը պահպանվել է բացասական տիրույթում: 12 ամսյա գնաճը կազմել է -0.2% (միջին գնաճը հունվար-օգոստոսին՝ 3.1%), մինչդեռ բնականոն գնաճը նվազել է ավելի քիչ չափով՝ հասնելով 0.4%-ի: Օգոստոսի 1-ին ԿԲ-ը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 10.25%, իսկ սեպտեմբերին նվազեցրել է ևս 0.5 տոկոսային կետով՝ հասցնելով այն 9.75%-ի:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը



Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ



12 ամսյա գնաճի մակարդակի ձևավորումը շարունակում է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի բացասական, և ծառայությունների գնաճի՝ դրական նպաստումների հակակշռմամբ: Սննդամթերքի գնաճի նպաստումը կազմել է -1.7%-ային կետ, մինչդեռ ծառայությունների գնաճը, թեպետ փոքր-ինչ դանդաղել է, շարունակում է պահպանվել համեմատաբար բարձր մակարդակում՝ 3.6%, շարունակելով դրական նպաստում ունենալ գնաճին 1.2%-ային կետի չափով: Ծառայությունների գնաճը հիմնականում արտացոլում է պահանջարկի ճնշումները, ինչը սահմանափակում է կենտրոնական բանկին քաղաքականության մեղմացման կտրուկ գործողությունների իրականացման հարցում:

5. Ֆինանսական միջնորդություն:

Օգոստոսին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ, չնայած որ բանկերի մոտ շարունակել է կուտակվել լրացուցիչ իրացվելիություն: Ֆինանսական միջնորդության աճը շարունակել է երկու հիմնական միտումներ՝ ավանդների ծավալների բարձր աճը (ռեզիդենտների ավանդները՝ 23.8%), և վարկերի ծավալների՝ ավանդների ծավալների աճին զիջող աճը (ռեզիդենտների վարկերը՝ 17.6%): Արդյունքում 2021թ.-ի սկզբից շարունակաբար խորանում է ավանդների և վարկերի դրական տարբերությունը, այսինքն՝ բանկերի լրացուցիչ իրացվելիությունը: Վերջինս պայմանավորված է նաև ավանդների աճում ոչ ռեզիդենտների էական մասնակցությունից, որը սակայն տարեսկզբի համեմատ կրճատվել է գրեթե 2 անգամ (աճը օգոստոսին՝ 29.3%):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



ՀՀ ֆինանսական շուկայում առավել ճկուն տոկոսադրույքները (միջբանկային ռեպո, պետական պարտատոմսեր) սկսել են փոխել միտումները նվազման ուղղությամբ, մինչդեռ առավել կոշտ տոկոսադրույքները (վարկեր, ավանդներ)՝ շարունակում են պահպանվել իրենց միջին մակարդակներում: Պետական պարտատոմսերի եկամտաբերությունների համար շարունակում է վճռորոշ գործոն մնալ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները շարունակում են արտացոլել առավել հիմնարար տնտեսական գործոնները՝ հիմնականում տատանվելով իրենց միջին մակարդակների շրջակայքում: Արդյունքում վերջին երկու տարում դիտվել է առավել ցածր տոկոսադրույքների մոտեցում առավել բարձր տոկոսադրույքներին, որը կանգ է առել տարեսկզբին, իսկ հաշվետու ամսում տոկոսադրույքների շարժը տեղի է ունեցել միջինի շուրջ բնականոն տատանումների տրամաբանության ներքո:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



6. Հարկաբյուջետային հատված:

Հարկային եկամուտները շարունակել են աճել բարձր տեմպերով: 2023 թ.-ի օգոստոսին հարկային եկամուտները կազմել են 157.9 մլրդ դրամ, կամ 2022թ.-ի օգոստոսի ցուցանիշից ավելի 8.5%-ով: Հունվար-օգոստոս ամիսներին հարկային եկամուտները կազմել են 1422.9 մլրդ դրամ, կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածից ավելի 15.5%-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Շահութահարկը և ավելացված արժեքի հարկը շարունակել են լինել հարկային եկամուտների աճը պայմանավորող հիմնական աղբյուրները՝ 6.2%-ային կետ և 5.6%-ային կետ մասնակցությամբ: Միաժամանակ, զգալի է նաև եկամտային հարկի դերը, որը հարկային եկամուտների աճին նպաստել է 4.1%-ային կետով: Բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերը, ինչը պայմանավորված է մետաղական հանքաքարի համար ժամանակավոր ներմուծված արտահանման տուրքի չեղարկմամբ և բնապահպանական և բնօգտագործման վճարներով:

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Պետական բյուջեի եկամուտների աճը առաջանցիկ է եղել ծախսերի նկատմամբ՝ հանգեցնելով բյուջեի հավելուրդի: Ընդհանուր առմամբ, հունվար-օգոստոս ամիսներին պետական բյուջեն ստացել է 1502.2 մլրդ դրամի եկամուտներ (նախորդ տարվա հունվար-օգոստոսի համեմատությամբ ավելի 14.5%-ով), և կատարել 1430.6 մլրդ դրամի ծախսեր՝ նախորդ տարվա հունվար-օգոստոսի համեմատությամբ ավելի 13.7%-ով: Նշված ծախսերը ընդգրկել են 1241.3 մլրդ դրամի ընթացիկ, և 189.3 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, որոնք նախորդ հունվար-օգոստոսի համեմատությամբ ավելի են համապատասխանաբար 11.7 և 29.2 տոկոսով:

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեի հավելուրդը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Օգոստոսի զարգացումները արտացոլում են պակասուրդային բյուջե՝ եկամուտների մակարդակին 24.9 մլրդ դրամով գերազանցող ծախսերով: Արդյունքում, 2023թ-ի հունվար-օգոստոս ամիսների հավելուրդը կազմել է 71.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 53.7 մլրդ դրամ և 2023-ի հունվար-հուլիսի 96.4 մլրդ դրամ ցուցանիշի նկատմամբ: